

ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՆՔՆԱՐԺԵՔԸ ԵՎ ՆՐԱ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱԿՑՎԱԾ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան (1965 թ.) պլենումի և ՍՄԿԿ XXIII համագումարի որոշումներին համապատասխան արդյունաբերական արտադրության ղեկավարման գործում տնտեսական խթանման դերի բարձրացումն էլ ավելի է մեծացրել արտադրանքի ինքնարժեքի հաշվառման և պլանավորման նկատմամբ եղած պահանջները:

Արտադրանքի ինքնարժեքի պլանավորումն ու հաշվառումը գունավոր մետալուրգիայի ձեռնարկություններում իրագործվում է արտադրության ծախքերի նախահաշվի և ինքնարժեքի կալկուլյացիայի տեսքով: Արտադրության ծախքերի նախահաշիվը գունավոր մետալուրգիայում իրենից ներկայացնում է դրամական արտահայտությամբ ձեռնարկության բոլոր տեսակի ծախքերի գումարը, կապված ինչպես արդյունաբերական արտադրանքի արտադրության, այնպես էլ ոչ-արդյունաբերական բնույթի կողմնակի աշխատանքների և ծառայությունների, սեփական կապիտալ խնարարության և կապիտալ վերանորոգումների ու ոչ-արդյունաբերական տնտեսությունների գործունեության հետ: Ծախքերի նախահաշվի հիման վրա մշակվում է գունավոր մետալուրգիայի ձեռնարկության ֆինպլանը, որոշվում անհրաժեշտ շրջանառու միջոցների շափը և ձեռնարկության արտադրական գործունեության արդյունքում ստացված ընդհանուր շահույթը: Այն հանդիսանում է կապող օղակ մի կողմից արտադրանքի ինքնարժեքի և մյուս կողմից՝ տշխատավարձի պլանի, նյութատեխնիկական մատակարարման և ֆինպլանի առանձին բաժինների միջև:

Ձեռնարկությունում արտադրվող տարբեր տեսակի արտադրանքի, ինչպես նաև կիսաֆարրիկատների, ծառայությունների և այլ աշխատանքների միավորի ինքնարժեքը որոշվում է նրանց կալկուլյացիայի օգնությամբ: Ներկայումս այն միակ ցուցանիշը, որի օգնությամբ կարելի է դատել հասարակական արտադրության արտադրանքի անհատական և հասարակական արժեքի մեծության մասին, համարվում է համապատասխանաբար նրանց անհատական և ճյուղային ինքնարժեքը: Ընդհանուր է, զինքը որպես արժեքի արտահայտություն վերջի վերջո պայմանավորված է արտադրանքի արժեքի մակարդակով, սակայն նրա պլանավորումը ևս, սոցիալիզմի պայմաններում կիրառվող գնագոյացման պրակտիկայում, փաստորեն իրագործվում է արտադրանքի ինքնարժեքի հիման վրա: Այս տեսանկյունից արտադրանքի առանձին տեսակների կալկուլյացիայի կազմումը ձեռնարկություններում հնարավորություն է ընձեռում դատելու նրանց անհատական ինքնարժեքի մեծության մասին, հաշվարկելու համանման սպառողական արժեք ունեցող արտադրանքների ճյուղային ինքնարժեքը, համեմատելու և վերլուծելու անհատական ու ճյուղային ինքնարժեքները և գիտական խմբերի վրա դնելու գնների սահմանումը:

Բացի այդ, արտադրանքի կալկուլյացիան օգտագործվում է ինքնարժեքի պլանի կառուցման գնահատման համար և համարվում է կարևորագույն միջոց արտադրական ծախսերի կարգավորման ու հսկման, նոր տեխնիկայի ներդրման արդյունավետության որոշման համար:

Տնտեսաշվարկի հետագա ամրապնդումը լեռնահանքային ձեռնարկություններում, նրա ներդրումը արտադրության առանձին ցեխերում և տեղամասերում պահանջում են արտադրանքի (ինչպես նաև կիսաֆարրիկատների և առանձին ծառայությունների) համապատասխան ինքնարժեքի ճշգրիտ հաշվարկում:

Արտադրանքի միավորի ինչպես պլանային, այնպես էլ փաստացի ինքնարժեքի որոշումը առանձին ղեկավարություն չի ներկայացնում, երբ ձեռնարկության արտադրական գործունեության արդյունքում ունենք մեկ տեսակի արտադրանք: Այս դեպքում արտադրության բոլոր ծախքերը վերագրվում են կալկուլյացվող արտադրանքի ինքնարժեքին և ելնելով արտադրված արտադրանքի միավորների քանակից որոշում նրա միավորի ինքնարժեքը: Սակայն դրա հաշվարկումը որոշակիորեն բարդանում է, երբ գործ ունենք արտադրության այնպիսի ճյուղերի հետ, որտեղ մեկ միասնական արտադրական պրոցեսի ընթացքում արտադրվում է տարբեր սպառողական արժեք ունեցող մեկից ավելի արտադրանք: Այսպես, հումքի համակցված (կոմպլեքս) օգտագործման

պայմաններում գունավոր մետալուրգիայի լեռնահանքային արդյունաբերության ձեռնարկություններում մեկ միասնական արտադրական պրոցեսի ընթացքում ստացվում են տարբեր սպառողական արժեք ունեցող արտադրանքի տեսակներ՝ գունավոր և հավաքյուտ մետաղների խտանյութեր: Արդյունաբերության մեջ հումքի համակցված օգտագործման պայմաններում արտադրանքի ինքնարժեքի կալկուլյացիայի ժամանակ ընդհանուր ծախսերի տարարաշխման վերաբերյալ պրակտիկայում օգտագործվող և տնտեսական գրականությունից հայտնի մեթոդները կարելի է ի մի հավաքել հետևյալ խմբերում:

Առաջին խումբ — Արտադրանքի բնային ցուցանիշների վրա հիմնված տարարաշխման մեթոդներ: Այսպես, նավթավերամշակման արդյունաբերության մեջ ընդհանուր ծախսերը տարարաշխվում են հում նավթի վերամշակումից ստացված արտադրանքների (բենզինի, կերոսինի, մազութի և այլն) միջև ըստ նրանց կշռային հարաբերակցության (երբեմն հաշվի առնելով առանձին գործակիցներ): Թիրթաքարերի վերամշակման արդյունքում ստացված արտադրանքների միջև առաջարկվում է ընդհանուր ծախսերը տարարաշխել ըստ նրանցում օրգանական զանգվածների պարունակության: Կան առաջարկներ ընդհանուր ծախսերը համակցված արտադրության առանձին արտադրանքների միջև տարարաշխել ըստ ծավալային (ջրատնտեսական կոմպլեքսում), ըստ ջերմունակության (կալորիականության) (նավթավերամշակման արդյունաբերությունում) ցուցանիշների:

Երկրորդ խումբ — Արտադրանքի արժեքային ցուցանիշների վրա հիմնված մեթոդներ՝ որպես սրժեքային ցուցանիշներ, նկատի է առնվում համակցված արտադրության արտադրանքների մեծածախ գները կամ դրանց ճյուղային ինքնարժեքները, իսկ վերջիններիս բացակայության դեպքում (արտադրանքի նոր տեսակների համար) այն արտադրանքների գները կամ ճյուղային ինքնարժեքները, որոնց փոխարինելու են դրանք:

Ընդհանուր ծախսերի տարարաշխման ժամանակ այստեղ կարելի է առանձնացնել սկզբունքորեն տարբեր երկու ենթախմբեր:

ա) Տարարաշխման մեթոդներ, որոնք հիմնված են համակցված արտադրության արտադրանքները ստորաբաժանելու հիմնականի (նպատակայինի) և հարակիցի (ուղեկցողի): Այս դեպքում ինքնարժեքի հաշվարկման ժամանակ համակցված արտադրության բոլոր ծախսերը վերագրվում են հիմնական արտադրանքին և նրա դումարից հանվում է հարակից արտադրանքների արժեքը հաշվարկված մեծածախ գներով կամ ճյուղային ինքնարժեքով (եթե այսպիսին հայտնի է):

բ) Տարարաշխման մեթոդներ, հիմնված համակցված արտադրության արտադրանքների ընդհանուր արժեքային դումարում (հաշվարկված մեծածախ գների կամ ճյուղային ինքնարժեքների օգնությամբ) նրանցից յուրաքանչյուրի ունեցած տեսակարար կշիռն համապատասխան:

Այս մեթոդները լայն կիրառում ունեն քիմիական և փայտամշակման արդյունաբերություններում, գունավոր մետալուրգիայում և այլ ճյուղերում:

Երրորդ խումբ — Ընդհանուր ծախսերի տարարաշխման ժամանակ արտադրանքի առանձին տեսակների աշխատատարությունն հաշվի առնող մեթոդներ: Սրանց հիմքում ընկած է համակցված արտադրության առանձին արտադրանքների աշխատատարությունը հաշվարկված աշխատանքային ժամանակի միավորներով: Այս խմբի մեթոդները տեսականորեն թերևս ավելի հիմնավոր և ճշգրիտ են, սակայն նրանց կիրառումը պրակտիկայում կապված է առանձին արտադրանքների աշխատատարության որոշման հետ կապված որոշակի դժվարությունների հետ, որոնց շուրջը ծավալված վիճարկությունները լայնորեն լուսարանված են տնտեսական գրականության մեջ:

Հիշատակված երեք խմբերում դասակարգված մեթոդներից յուրաքանչյուրն ունի և՛ իր առավելությունները, և՛ իր թերությունները: Այս տեսանկյունից համակցված արտադրության ընդհանուր ծախսերի տարարաշխման ժամանակ յուրաքանչյուր մեթոդի արժանիքները գնահատելիս պետք է ունենալ կոնկրետ մոտեցում և երբեք չձգտել որոնելու կամ հիմնավորելու մեկ այնպիսի համապարփակ մեթոդ, որը հնարավոր լինի առանց վերապահումների կիրառել արդյունաբերության բոլոր ճյուղերի համակցված արտադրությունների համար: Այսպես, համակցված արտադրության առանձին արտադրանքների միջև ընդհանուր ծախսերի տարարաշխումը, հիմնված դրանց բնային ցուցանիշների վրա, գործնականում կիրառման տեսանկյունից ամենից պարզն է և չի պահանջում լրացուցիչ հաշվարկներ: Սակայն, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ առանձին արտադրանքների հիշյալ բնային ցուցանիշների հարաբերակցությունը հաճախ ճիշտ չի արտացոլում դրանց արտադրության վրա կատարվող նյութական և աշխատանքային ծախսումները, այն տեսականորեն չի հիմնավորվում, ապա դրանց կիրառումը պրակտիկայում հանգեցնում է լուրջ սխալների: Այսպես, օրինակ, արտադրանքների կշռային ցուցանիշը հնա-

րավոր չէ կիրառել զուեավոր մետալուրգիայի համակցված արտադրություններում, երբ մեկ ելակետային հումքից՝ հանքաքարից արտադրվում է տարբեր արժեք (ներառաքառնտեսական հասկացությամբ) ունեցող պղնձի, մոլիբդենի և ոսկու խտանյութեր: Ընդհանուր ծախսերի տարաբաշխումն ըստ կշռային ցուցանիշի կհանգեցնեք այն բանին, որ 1 տոննա պղնձի, 1 տոննա մոլիբդենի և 1 տոննա ոսկու ինքնարժեքները կդառնային միմյանց հավասար, որը ճիշտ չէ և չի արտացոլում դրանց արտադրության աշխատատարությունը:

Նրկրորդ խմբի տարաբաշխման մեթոդների ընդհանուր թերությունը պետք է համարել օգտագործվող գներում տեղ գտած սխալների արտացոլումը այդ արտադրանքների ինքնարժեքների մեջ:

Դրա հետ մեկտեղ, այդ խմբում առանձնացված առանձին ենթախմբերի մեթոդներն ունեն նաև իրենց առանձնահատուկ թերությունները: Առաջին ենթախմբի՝ համակցված արտադրության արտադրանքների հիմնականի և ուղեկցողի ստորաբաժանման ժամանակ ինքնարժեքի հաշվարկման գործում տեղ գտած թերությունների մասին կխոսվի մի փոքր ներքևում: Երկրորդ ենթախմբի՝ համակցված արտադրության առանձին արտադրանքների արժեքին (հաշվարկված մեծածախ գներով) համամասնորեն ընդհանուր ծախսերի տարաբաշխման ժամանակ այդ արտադրանքների մեծածախ գների իրենց արժեքից ունեցած շեղումները, որը մեր երկրում զնադոյացման պլանավորման պրակտիկայում հազվագեպ երևույթ չէ, ամբողջությամբ իրենց արտացոլումն են գտնում այդ արտադրանքների ինքնարժեքներում: Իսկ հետագայում այս նույն ինքնարժեքների հիման վրա հաշվարկվում է առանձին արտադրանքների միջին ճյուղային ինքնարժեքը, որն ընկնում է նոր սահմանվող կամ բարելավման իմաստով վերանայվող մեծածախ գների հիմքում: Այսպիսով, ստացվում է մի փակ շղթա, որտեղ արտադրանքների մեծածախ գները պայմանավորում են համակցված արտադրության ծախսերի տարաբաշխման ժամանակ դրանց ինքնարժեքների մակարդակը, իսկ վերջիններս էլ իրենց հերթին՝ վերջին հաշվով մեծածախ գների մակարդակը: Եվ այսպիսով, չի ստեղծվում հնարավորություն ոչ միայն ճիշտ որոշելու համակցված արտադրության արտադրանքների ինքնարժեքները, այլ նաև վերանայելու և բարելավելու դրանց մեծածախ գները, դրանք իրենց սուբստանցիային՝ արժեքին մոտեցնելու առումով:

Ներկայումս հանրապետության զուեավոր մետալուրգիայի վարչության լեռնահանքային ձեռնարկություններում իումբի համակցված օգտագործման պայմաններում առանձին խտանյութերի ինքնարժեքը հաշվարկվում է «դուրս գրման» մեթոդով (Քաջաբանի, Դաստակերտի և Ազատակի պղնձ-մոլիբդենային կոմբինատներում), որի էությունը կայանում է հետևյալում. համակցված արտադրության բոլոր արտադրանքները, բացառությամբ մեկի՝ հիմնական արտադրանքի, վերագրվում են ուղեկցեք արտադրանքների թվին: Հիմնական արտադրանքի (հիշյալ կոմբինատներում մոլիբդենային խտանյութի) համար կազմվում է ինքնարժեքի կալկուլյացիա, որտեղ արտացոլվում են համակցված արտադրության բոլոր ծախսերը: Այնուհետև, այդ ծախսերի ընդհանուր գումարից հանվում է «ուղեկցող» արտադրանքների (պղնձի խտանյութի, նրանում ոսկու, արծաթի, ծծմբի և այլ նյութերի) արժեքը հաշված գործող մեծածախ գներով (տե՛ս աղյուսակը):

Ինչպես երևում է բերված աղյուսակի տվյալներից, այստեղ որպես ուղեկցեք արտադրանք առանձնացվող պղնձի խտանյութի արժեքը կազմում է ամբողջ հանքաքարի արդյունահանման և հարստացուցիչ ֆարրիկայում նրա մշակման լրիվ ինքնարժեքի 45,2 տոկոսը: Այսպիսի պայմաններում, մեր կարծիքով, մոլիբդենի խտանյութի առանձնացումը որպես հիմնական արտադրանքի, իսկ պղնձի խտանյութինը՝ որպես ուղեկցող արտադրանքի, արհեստական է: Հետևապես, սխալ և արհեստական է նաև մոլիբդենի ինքնարժեքի որոշումը «այդպիսի բաժանման վրա հիմնված «դուրս գրման» մեթոդով»:

«Ուղեկցող» արտադրանքի այսպիսի մեծ տեսակարար կշռի պայմաններում «հիմնական» արտադրանքի ինքնարժեքի որոշմանը «դուրս գրման» մեթոդով քնորոշ են հետևյալ թերությունները.

1. Ծախսերի ընդհանուր գումարից «ուղեկցող» արտադրանքի արժեքը մեծածախ գներով դուրս գրման ժամանակ արտադրության ծախսերի մակարդակի բոլոր փոփոխություններն արտացոլվում են միայն հիմնական (կալկուլյացվող) արտադրանքի ինքնարժեքում: Ընդհանուր ծախսերում տեղի ունեցող փոփոխություններից նույնիսկ նրանք, որոնք պայմանավորված են ուղեկցող արտադրանքի վերամշակման ժամանակ նոր տեխնոլոգիական պրոցեսների ներդրման հետ, ամբողջովին իրենց արտացոլումն են գտնում հիմնական արտադրանքի ինքնարժեքում:

**Մոլիբդենային խտանյութի ինքնարժեքի
կալկուլյացիան Քաջարանի պղինձ-մոլիբդենային կոմբինատում¹**

Հողվածների տնվանումը	Հիմնական հանքաքանակ (թէ)	Հանքաքանակի մաքսիմալ գաժար	Օրական գաժար	Ժամանակ ընդամենը	Ինքնակազմ և աշխատող կազմի թվեր	Ցեխային ծախս	Պողոտային աշխատող ծախս	Ուղեկցող աշխատող ծախս	Ընդհանուր կոմբինատային ծախս	Վերականգնող ծախս	Ընդամենը
1 մլն. տոն- նա հանքա- քար. ստաց.	864,4	256,8	372,9	239,6	136,0	270,0	27,6	1248,6	411,8	181,6	1512,1
մոլիբ. խտ.	31,3	9,3	13,5	8,7	4,9	9,8	1,0	45,2	14,9	6,6	100,0

2. Համակցված արտադրության ծախսերի նույնիսկ միևնույն մակարդակի պայմաններում հիմնական արտադրանքի ինքնարժեքը կիսովուրեղ կախված գույքի գրգռող արտադրանքի մեծածախ գների փոփոխությունից:

3. Հանքաքարի համակցված (կոմպլեքս) օգտագործման էլ ավելի ընդլայնման պայմաններում ուղեկցող արտադրանքի մեծ տեսակարար կշռի կամ դրանց մեծածախ գների անհիմն բարձր լինելու դեպքում, գույքի գրգռող «ուղեկցող» արտադրանքի արժեքը կարող է նույնիսկ գերազանցել (ինչպես, օրինակ, Տիրնաուպի պղինձ-մոլիբդենային կոմբինատում²) արտադրության ողջ ծախսերը և հիմնական արտադրանքի ծախսերը կդառնան բացասական մեծություն, որն անիմաստ է, և մեկ անգամ ևս հաստատում է նման պայմաններում ինքնարժեքի կալկուլյացիայի համար ընտրված մեթոդի անկատար և անհիմն լինելը:

4. Դուրս գրվող արտադրանքի արժեքը ձեռնարկության մեծածախ գներով հաշվարկելիս հիմնական արտադրանքի ինքնարժեքը փոքրանում (կամ մեծանում) է այդ գներում ներառված օգուտների (կամ ինքնարժեքից ցածր սահմանված առանձին արտադրանքների մեծածախ գների դեպքում՝ վնասների) չափով:

Վերոհիշյալը խոսում է այն մասին, որ հանրապետության լեռնահանքային ձեռնարկություններում կիրառվող ինքնարժեքի կալկուլյացիայի «գույքի գրգռող» մեթոդն ունի լուրջ թերություններ և նրա կիրառումը պրակտիկայում հանգեցնում է կոպիտ սխալների:

Այն հարցին, թե՞ արդյոք անհրաժեշտ է համակցված արտադրության բոլոր արտադրանքների համար հաշվարկել ինքնարժեք և կազմել առանձին կալկուլյացիա, մեր կարծիքով պետք է ելնել ապրանքի (իրի) արժեքի և սպառողական արժեքի միասնությունից: Եթե համակցված ուժերից ստացված արտադրանքն ունի հառարակական սպառողական արժեք, ապա այն պետք է անպատճառ դառնա կալկուլյացիայի օբյեկտ, իսկ ռեթե իրն օգտակար չէ, ապա նրա վրա ծախսված աշխատանքը ևս օգտակար չէ, աշխատանք չի հաշվվում և ոչ մի արժեք չի կազմում:

Հետևապես, հանրապետության պղինձ-մոլիբդենային հանքաքարի համակցված օգտագործման պայմաններում պետք է հաշվարկել ոչ միայն մոլիբդենի խտանյութի ինքնարժեքը, ինչպես կատարվում է այժմ, այլ նաև պղինձինը: Հումքի համակցված օգտագործման ժամանակ արտադրանքի առանձին տեսակների ինքնարժեքների հաշվարկման կարևորագույն խնդիրն է լինելու շահագործման ընդհանուր ծախսերի տարարաշխումը պղինձի և մոլիբդենի խտանյութերի միջև: Այդ նպատակով օգտագործվող ընտրված տարարաշխման մեթոդի զխափոր չափանիշը պետք է լինի նրա ունակությունը արտացոլելու այդ արտադրանքների արտադրության հետ կապված իրական ծախսերը: Միաժամանակ տարարաշխման առաջարկվող մեթոդը պետք է շահագրգռի ընդլայնելու հումքի համակցված օգտագործմանը, նպաստի հումքից օգտակար կոմպլեքսներին գույքի կորցման աստիճանի բարձրացմանը և ներտնտեսաշխարհի կազմակերպմանը:

¹ Թերված թվերը պայմանական են, սակայն արտացոլում են կալկուլյացիոն առանձին հողվածների ծախսերի օբյեկտիվ հարաբերությունը:

² Г. Д. Кузнецов, Калькулирование себестоимости продуктов комплексного сырья, М., 1964, стр. 30—31.

³ Կ. Մարքս, Կապիտալ, հատ. 1, Սրեան, 1954, էջ 47:

Համակցված արտադրության արտադրանքների ինքնարժեքների հաշվարկման հիշյալ կարևորագույն պայմանների ապահովման համար ընդհանուր շահագործողական ծախսերի տարա-
շախման հիմքում պետք է ընկած լինի կալկուլյացիայի այնպիսի մեթոդ, որը հաշվի առնի
արտադրության տիպը և բարդությունը, արտադրվող արտադրանքի բնույթն ու անվանակարգը,
տեխնոլոգիական պրոցեսների առանձնահատկությունները:

Ինքնարժեքի կալկուլյացիայի այնպիսի մեթոդ, որը հաշվի է առնում նաև լիոնահանքային
արտադրության առանձնահատկությունները, ծախսերի հաշվարկումն է՝ ըստ արտադրանքի կրած
ձևափոխումների (по переделам): Կալկուլյացիայի կազմումը ըստ արտադրության ձևափո-
խումների և ստադիաների հնարավորություն է ստեղծում լիոնահանքային կոմբինատի ծախսերը
անմիջականորեն վերադրելու համապատասխան ձևափոխումներին և ստադիաներին:

Նշենելով հանրապետության լիոնահանքային ձեռնարկություններում արտադրության տեխնո-
լոգիական առանձնահատկություններից, արտադրանքի ինքնարժեքի կալկուլյացիայի և հաշվառ-
ման նպատակով հանքանյութի համակցված օգտագործման պայմաններում, առանձին խտա-
նյութերի արտադրության կրած ձևափոխումները կարելի է բաժանել երկու խմբի. 1) ձևափո-
խումներ, որտեղ ավարտվում է կիսաֆարրիկատների կամ ապրանքային տեսք ունեցող արտա-
դրության պրոցեսը (օրինակ՝ հանքաքարի արդյունահանումը հանքաքանում) և 2) ձևափոխում-
ներ, որտեղ կիսաֆարրիկատի կամ ապրանքային տեսք ունեցող արտադրանքի արտադրության
պրոցեսը կարելի է ստորաբաժանել մի քանի ստադիաների, որոնցից յուրաքանչյուրում արտա-
դրանքը ենթարկվում է որոշակի որակական և քանակական փոփոխությունների, սակայն այն
դեռ չունի ապրանքային տեսք առանց հետագա ստադիաներում դրա վերամշակման: Այսպես,
հանրապետության պղինձ-մոլիբդենային հանքանյութի համակցված օգտագործման պայման-
ներում այն նախ ենթարկվում է մանրացման, ապա կոլեկտիվ հարստացման և երբ միայն սե-
լեկտիվ հարստացման: Նվճ առաջին երկու ստադիաներում պղինձի և մոլիբդենի խտանյութերի
արտադրության ծախսերը ընդհանուր են (հանքանյութի մանրացման և կոլեկտիվ հարստաց-
ման համար), ապա սելեկտիվ հարստացման ծախսերը կարելի է անմիջականորեն վերադրել
առանձին խտանյութերին: Հետևապես, այստեղ մեծ նշանակություն է ստանում ընդհանուր ծախ-
սերի ճիշտ տեղաբաշխումը պղինձի և մոլիբդենի խտանյութերի միջև, դրանց ինքնարժեքի հաշ-
վարկման համար: Այդ տարաբաշխման հիմքում պետք է ընկած լինի մի այնպիսի եղանակ, որը
ճշտորեն հաշվի առնի դրանցից յուրաքանչյուրի արտադրության աշխատատարությունը, հանքա-
նյութի համակցված օգտագործման կոնկրետ պայմաններում: Այս առումով առաջարկվում է
վերամշակվող հումքի (հանքաքարի) արժեքը, դրա մինչև հարստացուցիչ ֆարրիկա տեղափոխ-
ման, մանրացման և կոլեկտիվ խտանյութի ստացման վրա կատարված ծախսերը, տարաբաշ-
խել պղինձի և մոլիբդենի խտանյութերի միջև՝ ընկելով 1 տոննա մետաղական պղինձ և 1 տոննա
մետաղական մոլիբդեն (համապատասխան խտանյութերում) ստանալու համար անհրաժեշտ հան-
քաքարի կշռային քանակությունների հարաբերակցությունից:

1 տոննա մետաղ (մոլիբդեն կամ պղինձ) խտանյութում ստանալու համար անհրաժեշտ
հանքաքարի քանակը որոշելիս հաշվի է առնվում դրանց պարունակությունը արդյունահանված
հանքաքարում, և հարստացման ժամանակ սահմանված կորզման պլանային գործակիցը, այսինքն

$$\text{Հանքաքարի քանակը} = \frac{1 \text{ տոննա մետաղ խտանյութում}}{\text{պարունակություն. կորզման գործակից}} \cdot 100\%$$

Այս եղանակով հաշվարկված առանձին մետաղների խտանյութերի արտադրության համար
անհրաժեշտ հանքաքարերի հարաբերակցությունը կհամապատասխանի դրանց միջև եղած աշ-
խատատարության հարաբերակցությանը, իսկ հիշյալ ընդհանուր ծախսերի արտաբաշխումը
կդրվի գիտական հիմքերի վրա:

Վերը շարադրվածը ցույց տանք կոնկրետ օրինակով (օգտագործելով հոդվածում բերված
աղյուսակի տվյալները): Հաշվարկները ցույց են տալիս, որ Քաբարանի պղինձ-մոլիբդենային
կոմբինատում 1 տոննա մոլիբդեն համաձայն խտանյութում ստանալու համար անհրաժեշտ է
օգտագործել 2061,5 տ. հանքաքար, իսկ 1 տոննա պղինձ ստանալու համար 321,2 տ. հանքա-
քար: Հիշյալ քանակությունները գտնվում են 1 : 0,16 հարաբերակցության մեջ: Այս հարաբերակ-
ցությամբ էլ առաջարկվում է տարաբաշխել վերամշակվող հանքաքարի արժեքը (864,4 հազ. ու.),
դրա տեղափոխման ծախսերը (256,8 հազ. ու.), պլանային տնտեսության ծախսերը (27,6 հազ. ու.)
և էներգետիկ, օժանդակ նյութերի ծախսերի և աշխատավարձի այն մասը, որոնք կատարված
են մինչև կոլեկտիվ խտանյութի ստացումը (657,5 հազ. ու.), այսինքն հանքաքարի կոլեկտիվ
հարստացման ստադիայի նետ կապված ծախսերը: Հանքաքարի վերամշակման սելեկտիվ ստա-

դիայի՝ առանձին խտանյութերում մետաղների հետագա հարստացման և դրանց շորացման հետ կապված ծախքերը կարելի է ուղղակիորեն վերագրել առանձին խտանյութերին: Այս եղանակով կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ վերը բերված աղյուսակի ուղղակի ծախսերից մոլիբդենի խտանյութին ընկնում է 1610,9 հազ. ռուբլի, իսկ պղնձինը՝ 286,4 հազ. ռուբլի:

Արտադրական ծախքերի մի մասը նույնպես հնարավոր է ուղղակիորեն վերագրել առանձին խտանյութերին (օրինակ՝ խտանյութերի փաթեթման, դրանց պահպանման և ճանապարհային ծախքերը), իսկ մյուս մասը, ինչպես նաև ընդհանուր կոմբինատային և ցեխային ծախքերը առաջարկվում է տարաբաշխել մոլիբդենի և պղնձի խտանյութերի միջև ստացված ուղղակի ծախքերին համամասնորեն: Այս եղանակով հաշվարկված պղնձի և մոլիբդենի խտանյութերի ինքնարժեքները ցույց են տալիս, որ մոլիբդենի խտանյութին ընկնում է հանքաքարի արդյունահանման և վերամշակման լրիվ ինքնարժեքի 86,6 տոկոսը, իսկ պղնձի խտանյութին՝ 13,4 տոկոսը: Իսկ ինչպես երևում է վերը բերված աղյուսակի տվյալներից, ներկայումս նույն կոմբինատում մոլիբդենի խտանյութին էր վերագրվում հանքաքարի արդյունահանման և վերամշակման լրիվ ինքնարժեքի 54,8 տոկոսը, իսկ պղնձի խտանյութին 45,2 տոկոսը:

Մեր առաջարկված եղանակով հաշվարկված ինքնարժեքները ամբողջությամբ հաշվի են առնում դրանց արտադրության աշխատատարությունը, վերացնում են ընդհանուր ծախքերի տարաբաշխման վերը նշված թերությունները:

Դրա հետ մեկտեղ, ինչպես մոլիբդենի, այնպես էլ պղնձի խտանյութի արտադրությունը հանքաքարի համալիր (կոմպլեքս) ռզտագործման պայմաններում հիշյալ կոմբինատում դառնում են բարձր շահութաբեր: Արտադրության փաստացի ծախքերի հաշվառումը վերը առաջարկվող մեթոդով և արտադրանքների առանձին տեսակների ինքնարժեքի կալկուլյացիայի կազմումը առաջարկվող եղանակով հնարավորություն են ընձեռում կատարել արտադրանքի ինքնարժեքի խորը վերլուծություն և ներդնելու ու ամրապնդելու ներտնտեսական կերպով լեռնահանքային ձեռնարկություններում: